

## Ճ

ՃԱՆԻԿ ԱՄԻՐԱՅ ԱԿՆՑԻ, ՈՐԴԻ ՍԻՄՈՆ ԱՄԻՐԱՅԻ.— Ս. Յակոբի վանքին սեպհականութեանց խնդրոյն դատաւարութեան առթիւ, 1228 թուականաւ սուլթան Մահմուտի կողմէն տրուած հրովարտակին մէջ կը յիշատակուի Ճանիկ ամիրայի անունը, իբրեւ Ս. Յակոբի իրաւանց պաշտպան: 1845ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը նախորդ փկե. Յովհաննէս եպս.ի հետ և կը նուիրէ 25,000 դրշ. այն նպատակաւ որ բնիկ միաբաններուն մէն մի պատարագին, փոխանակ երեքի չորս դրշ. ժամուցազին տրուի, և հիւրերուն՝ երկուք: Սոյն նուիրատուութեան համար, Ս. Աթոռի կողմէն յիշուցանուող յիշատակարաններ կը դրուին Ս. Յարութիւն, Բեթղէհէմ և Ս. Ածածին: Ճանիկ ամիրայ իր այս այցելութենէն օգտուելով՝ Ս. Աթոռոյ դրամարկղէն կը գանձէ Սկիւտարի ճեմարանին ի նպաստ 150,000 դրշ.ի գումարը, վասն զի Զաքարիա պարք. տարեկան 60,000 դրշ. նպաստը դադրեցուցած էր ինչ ինչ նկատումներով: (Սաւարան, էջ 1254—55): Ճանիկ ամիրայ կը վախճանի 1856ին. իր ծախքովը շինել տուած է Խասկալի (Արմաշի մօտ) Մծբնայ Ս. Յակոբ հայրապետի եկեղեցին 1834ին. (քք. Բ. հատ. էջ 152):

Հանգուցելոյն տիկինը մհտ. Նարգուհի և որդին մհտ. Միրիճան Ամիրայ 1858 ին ուխտաւորութեամբ կ'այցելեն Ս. Յակոբի վանքը: Յովհաննէս պարք. Մովսէսեան՝ այդ առթիւ, Ս. Պանդարեոն բժշկին մատուցել կը նուիրէ անոնց, խաչի մը մէջ ամփոփուած:

